

Վ.ԱՐՁՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՍԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ:

ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԱԿ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն կա չեն գարձուիր:

Արտոնատ. ժ. ՄԻՒՆԻՍԹԷ:

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱՎՏԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ:

Բ.Լ.ԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

ՂՐՇ. ՊՂՋ

Գանձիկի համար	Տարեկան,	50
»	Վեցամսեայ	30
Շրջակայից	Տարեկան,	60
»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՍԱՐ

Տարեկան	Ֆրանկ	18
Վեցամսեայ	»	10

ՌՈՒՍՈՆԵ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՍԱՐ

Տարեկան	Րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԿԵԿ Է

ՍԻ ՔՂԹԱԿԱՐԻ ԾԱՌՔԸ

Թերթի վարչութեանը վրայ է:

ՈՒՍՊԵՐԹՈ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Եւրոպական թերթերէն կը քաղենք բովանդակութեան սուղի մէջ թաղող ողբացեալ Ումպերթօյի եղերական վախճանին մանրամասնութիւնները:

Թագաւորը ժամն առաւօտեան ինն ու կէսին մեկնեցաւ պալատէն, ընկերակցութեամբ Արքունեաց նախարար Բոնիֆո-Վալլիա զօրավարին և Մարմնամարզական ընկ. Տնօրէն Ալօկատորոսի Գուստաւօ զօրավարին:

Ամբողջ բռնած էր ճամբաները և 2000 մարդիկ կը սպասէին Նորին Վեհափառութեան, բեմերը լեցուած էին տիկիներով ու պարոններով:

Թագաւորը լսեց արտասանուած ճառերը և ըստ սովորութեան, ինք բաշխեց մրցանակները յաղթականներուն, ամեն մէկուն ուղղելով մտերմական ու դուռատական խօսք մը: Ներկայ եղող իշխանութեանց հետ անուշ անուշ կը խօսակցէր:

Հանդիսին աւարտման մարմնամարզական ընկերաց կողմէն մատուցին զէնքեր ու թագաւորը պատասխանեց գլխարկը հանելով: Բարձրաձև գլխարկ մը դրած, բեհեկիօք հագած էր:

Արքայական ընկերութեան արմատական երեսփոխան Բէնեդիկտի ըսաւ:

—Ալ՛ ծեբացած եմ հիմա, բայց կը նախանձիմ այս առողջ երիտասարդներուն, կա՛ր ժամանակ որեւալ սիրահարած էի մարմնամարզի: Յետոյ, ելաւ ա ըս Տօլօն լծուած կառքը, Բոնիֆո-Վալլիա և Ալօկատորոս զօրավարներուն հետ: Արքայական կառքին ձախ կողմը նստած էր զաւաթապիտակներու տեղակալը Պօրտարէլլի:

Նուագածուններու խումբն երգեց Արիստական խաչերգը, և կեցցե՛ր քաղաւորը աղաղակը դուրս ելաւ բոլոր կողմքերէն:

Մինչդեռ ձիերը խանգավառ գոռում գոչումներէն գրգռուած կը դոփէին խրոխտաքայլ, երեսուն տարեկան երիտասարդ մը, կարճուկ, գալիպդէմ, գիրուկ, կառքին մտնեցաւ: Թագաւորը դեռ կանգնած էր կառքին մէջ ժողովուրդին ողջուններուն պատասխանելով:

Անձանօթը մտնեցաւ կառքին աջկողմի պատուանդանին և նշան առնելով թագաւորին վրայ, երեք շրջահարի հարուած պարպեց, որոնք շատ որոշ լուռեցան:

Վեհապետը տապալեցաւ ինկաւ կառքին բարձիկներուն վրայ, մինչդեռ կառապանն ուժգին կը մտրակէր ձիերը:

Կառքը կտրեց անցաւ ամբողջ, փոշիւնց ամպի մը մէջէն:

Այս ամենն եղաւ մէկ վայրկեանի մէջ:

Մարմնամարզիկ մը, որ քանի մը քայլ հեռուն կը գտնուէր, վազեց ու ոճրագործը գետին գլորեց կռուի սաստիկ հարուածով:

Գարապինակներու սպարապետը Սարգա-

դօրէ եւ բոլոր գարապինակները շրջապատեցին անձանօթը: Ոճրագործը բռնու ճիգեր կ'ընէր յաջողելու պատուել զօրքի մը համազգեստը:

Ի վերջոյ, կապեցին ու կարարէրգի անուն արհեստաւորի մը կառքին մէջ նետեցին զանի, մինչդեռ ամբողջ, կատաղած, կ'ուզէր անպատճառ իր ձեռքով դործադրել արգարութիւնն ու իսկ և իսկ նոյն տեղն սպաննել մարդապանը: Քանի մը մարմնամարզիկներ, ճոճելով իրենց գաւազանները, կը փորձէին նետուիլ թշառականին վրայ ու մահացնել զանի:

Նոյն այն պահուն, թագաւորը կը հասնէր արքայական Պալատը:

Շատ գեղոյն էր և ցաւագին հեծեծանքներ կ'արձակէր: Տարաքաղղ վեհապետը մեռած ճիգ այն վայրկեանին որ կառքը կ'անցնէր պարտիկ շրջափակէն:

Գալ. Կայլէաձձի քննիչը, որ ետեւէն կ'երթար հանգուցեալ թագաւորին և սպանման պահուն կառքին քովերը կը գտնուէր, սոյն եղերական դէպքին օրը հրատարակուած քանի մ'անձից լուրերը կը ճշդէ:

Թագաւորն ա՛յնչպիսի զուարթ չէր, ինչպէս ըսին. փոքրիկ բայց ո՛չ աննշմարտի տխրութիւն մը կը մթագնէր անոր դէմքը: Ինչպէս որ ըսինք, արքայական ընկերութեան վար իշխողով, ձախ կողմէն նստաւ իր կառքը:

«Ուրախ եմ, ըսաւ, այսքան սիրուն հանգիսի մը ներկայ գտնուելուս»: Գեռ կառքին մէջ կանգնած էր, երբ Պրէստի պարպեց իրարու ետեւ շրջահարի երեք հարուածները:

Թագաւորը չեղակի ինկաւ Բոնիֆո Վալլիա զօրավարին վրայ, որ անոր քովը նստած էր: Թագաւորն իր մարդասպանին վրայ նետեց նայուած մ'այնքան ահաբեկի, այնքան խորին, որ շատերը ստիկացին: Ասի անմուսնապի նայուածք մ'եղաւ, կ'ընէ կայլէաձձի:

Երկրորդ և երրորդ հարուածին միջև թագաւորը քիչ մնաց որ մարէր ինար, Բոնիֆո-Վալլիա զօրավարը հասկցաւ ու պոռաց, —Վեհափա՛ռ:

Թագաւորը պատասխանեց.

—Ոչի՛նչ, կարծեմ թէ բան մը չէ՛:

Գարապինակներու զօրանցիին մէջ, Չէրնօքքի Ամէրիօ պահապանն եղաւ որ առաջին անգամ նետուեցաւ մարդասպանին վրայ ու ըսաւ անոր.

—Թագաւորը սպաննեցիր, վա՛տ:

—Ո՛չ, վա՛տ պիտի ըլլայի, պատասխանեց Պրէստի, եթէ սպաննած չ'ըլլայի զանի:

—Բայց դուն փախչիլ փորձեցիր:

—Ա՛հ, այո՛, եթէ կրնայի, պիտի փախչէի յօժարակամ:

—Անիշխանակա՞ն ես դուն:

—Կը պատկանիմ շատ մը քաղաքական ըն-

կերթեանց, բայց ո՛չ մին հաւանիտ է իմ գաղափարներուս:

Յետոյ, մարդասպանը նորէն վտակուեցաւ մնաց արհամարհոտ լուծեան մը մէջ:

Մարմնամարզիկ մը՝ գաւազանի մը հարուածով ծանր վէրք մը տուած էր անոր ըջիւն:

ԹԱԿՈՒՀԻՆ ԵՒ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ

Երբոր այս ահաբեկ ոճիրը կատարուած էր, Թագաւորն մեծ ընդունելութիւն մը կատար: Յանկարծ իմացուցին իրեն թէ՛ թագաւորն անհայտնու էր:

Թագաւորն աղէտ մը գուշակեց ու ամենամեծ կասկածներով տանջուեցաւ: Պարտին մեծ սանդուխտն վար վազեց: Մտաւորը դրուած էր մահճի մը վրայ, գետնայարիկ սրահներէն մեկուն մէջ:

Թագաւորին շուրջը շուտով համաձայնած էին Տօրգ. Սարլիօ, Տօրգ. Էրպա, Փիլի. քաղաքապետն ու Տօրգ. Վէրչէլլի. Մօնէայի հիւանդանոցին առաջին վիրաբոյժը:

Թագաւորն շուտով հասկցաւ տուրախ աղէտը որ զինք կը հարուածէր: Երբոր կրցաւ տեսնել թագաւորը, աչքերը մարաւ: անկիւնդան, սուր ճիւղ մը ձգեց, յետոյ ըստ բժիշկներուն.

—Վիրաւորուած է, վիրաւորուած է, դիտացե՛ր, ազատեցե՛ք:

Ու լալով սղալով, իր ամուսնական վշտին մէջ հիանալի, բժիշկներուն կը պապատէր: Աւա՛ղ, հարկ պիտի ըլլար բռնի նեղացնել ու դուրս հանել թագաւորին, հաստատելու համար թէ՛ թագաւորը մեռած էր:

Գիակը մերկացուցին ամբողջովին. երեք վէրքեր նշմարուեցան, մէկը սրտին ծայրը, խորշին մէջ թափանցած, ուրիշ մը ձախակողմը, և երրորդն ալ դէպ ի սան ու ալ բազուկն երկնոյց հինգերորդ և վեցերորդ կային մէջ:

Վէրքերէն արիւն կը հոսէր, բայց շատ քիչ: Բժիշկները վէրքերը լուացին ու գիտիլը դրին անկողնի մը վրայ, և շապիկ մը հագցնելէ վերջ, պատանքով մը պատեցին, մինչդեռ վեց մեծ կեռոններ կը վառէին անկողնին շուրջը:

Այն վայրկեանին, թագաւորին նորէն երեցու գերարկուի մը մէջ փաթեթուած: Ասի ահաբեկի և խորապէս յուղիչ տեսարան մ'եղաւ:

Ամենքը ծնկազուծ կ'ապօթէին... Քիչ յետոյ ներս մտան Գլ. Ռոտտի, Մօնէայի Աւաղ-Էրչը, Գեր. Պիլյանի և Սանթա Մարիա Ալլա Սթրատայի վանահայրը:

Թագաւորն, անձկութեան վայրկեանի մը, ծունկերուն վրայ քաշքշուելով, կը մտնէր զիսկին և ձեռքերը միացուցած, հեծկրտանք լսեց-գուած ձայնով մը կը քացագանչէ.

«Գուն ա՛յնքան բարի էիր, մէկու մը չարիք չ'ըրիր, ու դեք սպաննեցիր»... Ա՛հ, ահաւա սիկ դարուն ամենամեծ ոճիրը...:

Վեհապետուհին տարին վերջապէս իր սեն-

եակները. բայց միշտ կ'ուզէր վերադառնալ, ազօրեւէր դիտելին քով . . .

Սենեակը կը գտնուէր Բոնձիւր-Վայրիս զովարը, ուրիշ սպաններ, Տօք. Էրզրա և Տօք. Վէրջէլի: Ամենքն ալ կուրային:

Քիչ մը վերջը գիւղը ծածկեցին Արքունեաց պարտէզէն քարտած թարմ ծաղիկներով. այնուհետեւ թագաւորին մարմինը մահճի մը վրայ փոխադրուեցաւ իւր սենեակը:

Այն առնէն, սպանման գոյժը հեռագրուեցաւ բարձր արքայազուն իշխաններուն, աքթայական զերգաստանի բոլոր մարդոց ու բոլոր Արքունիքներուն:

ԳՈՅԺԸ ՀՍՂՈՐԳՈՒՄԻՆ ԵՄԻՍԻՆ ԻՇԽԱՆԻՆ

Սպանման իրիկունն իսկ Մովսէսին նախարարութիւնը Աթէնքի իտալական գեոպոլիտիկ հեռագրած էր գիտնալու համար թէ՛ նաքօլի իշխանին Ենթա արքայական զբօսանաւը (Յագդ) գեւ Բիրէա՞ էր:

Թօքփիլանաւ մը զրկուեցաւ Մեանսոյի նեղուցը Ենթաի սպանուելու համար:

Հետեւեալ օրը կը տեսնուէր զբօսանաւը նշանացի իմացոյցին արք. իշխանին ստիպի գոյժը:

Նշանացի պատասխանով մը յայտնի եղաւ որ իշխանը նախ մէջէն հասկցած էր գոյժը և Ենթա զբօսանաւը գէտի ի Պրինտիգի բռնեց ճամբան անմիջապէս:

ԻՄ ՎՐԷԺԸ

Ոստի մարդկանց և աստուածոց սէրն՝ իւր թոյն քո ակնարկին մէջ զբրաւ . . .
Ու ժըպիտիգ մէջ անմեղուկ, վարդապոյն՝
Իրեն ծաղր սիրտաւ . . .
Եւ դու գիտցար հրմայքներովը ընդարոյս,
Տանջի սիրտըս բոցակէզ,
Ինչ իրձերսս սալով յոյն ու տարակոյս,
Կ'ատեմ . . . բայց կը սիրեմ քեզ:

Դու՛ զեռ տղայ, կանացի հեռ մ'ունեցար,
Հսիք, խաղամ սրտը հեռ . . .
Ու կրծիւով անոր սիրտը նետահար,
Չ'ընեմ անկից նոյն անհետ:
Իսկ երբ աչերդ յոխորտանսք ինձ նային,
Թո՛ղ սա ըլլայ իմ վրէժ,
Թէ երբեմն սիրեցիր զես անձկագին,
Կ'ատեմ . . . բայց կը սիրեմ քեզ:

ԱՐՏԱՇԷՍ ՄՍՐԼԵԱՆ,

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խորամանկութիւնը միջակ գիտնորու և երկրորդ սիրտերու միայն բաժինն կը ստանայ և և պիտի ըլլայ միշտ . . . նա ինքնամոլորութեամբ անպատեհ է, և կը խաբէ ապաշինար միայն, որոնք խոստովարութիւնը խելք, ծանրակցութիւնը՝ խոստովարութիւն, լրբութիւնը՝ համար, մեծամտութիւնը՝ արժանապատուութիւն կը կարծենք: Իրեանք ձգենք այնպիսիներուն, որոնք չ'են կրնար ստանց շատապանելու՝ հրապարակ կենել բացերես: Իսկ մենք . . . չ'ըլլանք ո՛չ կեղծ, ո՛չ խորամանկ:

ՄԻՐԱՊՈ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԵՐ

Առաջին անգամ տեսայ զայն Բերայի Նարեկեան վարժարանը, տարեկան հարցաքննութեանց առթիւ այցելութեան էր եկած:

Որքան սր զեռ տղայ կը համարուէի, սակայն և այնպէս տակաւին կը յիշեմ այն պատկանանքի ու շիտթի տ գաւորութիւնը՝ թողող նորա տեսքը, որ, բաւ եղած էր աղքատ իմ արդէն զոգանար սրտի վրայ, նախանաւանդ կըր չ'ինջ ու խոր նկատը վրաս սեւեռելով՝ առաջարկեց ինձ այնպիսի անկեղծ հարցում մը՝ որոյ հանգէպ թերեւս դատաւոր մ'իսկ պիտի պատասխանէր:

Շիկնեցայ, շուտեցայ, քրտնեցայ, վերջապէս կեթիւի այնպիսի արգահատելի գրտութեան մ'էի մատնուած՝ որ նորա գուրբ շարժելի, ու նա, մրմնջած մի քանի կրկնուող պատասխաններովս գոհանալ կեղծելով, «Ապրիտ» ով մը զիս ազատեց անկը գրտութեան:

Ես այն օրէն հակակրանք մ'զգացի անոր դէմ: Ու թը տարի անցեր էր անկից իմեր, բնաւ չէ՛ր տեսած զինքը . . .

Օր մը յանկարծ, Ղալաթի տեսայ զայն չրջապատուած գաւառացի պանդուխտներով, որոնց մէջ կ'երե-

մարաներէն առած մը կ'ըսէ. « Բարեկարգ սէրը մարդ իր անձէն կ'սկսի ». առած՝ զոր մենք մեկնաբանելով կ'ըսենք. « Հանրութեան բարեկամ ըլլալու համար պէտք է նախ ինքն իր անձին բարեկամ ըլլալ » բարոյսապէս: Արդարեւ կ'ի՞նք մարդ մ'ինքն իր անձն չի սիրեր, բնականաբար ուրիշներն ալ չ'իրնար սիրել. սա պարզ պատճառաւ որ՝ այնպիսին չ'ունի ճշմարիտ սիրոյ զգացումը:

Հարկ է հոս իսկապիսի մը բանալ յայտարարելու համար թէ « սէր » բառով կ'ակնարկենք այն անկեղծ, անբիծ, սուր սիրոյ, որ հետզհետէ աւելի կ'արձարծի, առանց երբէք յագեցալու. որ երբէք չ'ապականիր. որ իսպառ կը մերժէ ամեն նիւթական և աննամուտական գծուծ, փոշու, գետնաքարչ հաշիւներ: Կ'ակնարկենք այն սիրոյ, որ մարդկային էակը կ'աղոտացնէ, կը վստմացնէ, ճշմարտապէս կը զիւցազնացնէ: Սաւուրը Դաւիթին արդար վրէժիկներովէն կ'ազատէ, վերաւոր Սաղուկեցին ալապաւան Սամարային գիրը կը նետէ, և Աստուածորդին Ուալ կը հանէ . . . Ի մի բան կ'ակնարկենք ընկերային սիրոյ, որուն նշանաբանն է «Իմ հանդիս ընդհանուրին երջանկութեան մէջ»: Գործազրտութիւնն է սա այն պատգամին որ կ'ըսէ. «Սիրեսցես զնկերք քո իրրու գանձն քո»:

Իրիւս օր մ'աւելի երկարօրէն խոսիմք ընկերային սիրոյ հանգամանաց և արգանց վրայ:

Աս արժ մտնենք թէ պիտի կրնանք առանց բացառաւ և անհեթեթ չ'եղու մը գտնուել այն նիւթին որ գրութեան իրիւս վերնագիր գրուած է: Անշուշտ և աննշան զիտութեամբ, վստմա չ'կայ երկու բան որ իրարու հետ այնքան սերտ առնչութիւն ունենան, որքան Սեւ և Ընկերութիւն բառերը:

Յիշարի՛ առանց չ'ապագանց միտք յողնեցնելու՝ ունէ աննատ մը կը հաննի սա եզրակացութեան թէ՛ սէրը միայն կը կազմէ խորթին ու հիմը ամեն ընկերութեանց: Ուր որ մէկէ աւելի անձինք գաղափարով եւ նպատակաւ կը համաձայնին, հոն սիրոյ և համարաշխարհեան գոյութիւնը զորութեամբ կը հասկնանք: Ինչ է արդէն որեւէ ընկերութեան մը նպատակը, ո՞չ սպասքէն առաւել կամ նուազ թեւով միանալ՝ գիմուելու համար դէպ ի որոշեալ կէտ մը: Կարելի է միտքի մասին սիրոյ: Նպատակին հետ գործ չ'ունենք հոս, սա կրնայ ըլլալ յանգի կամ շինել. կոտորել կամ սպրեցնել. քաղաքակրթել կամ վայրենացնել: Նպատակը անշուշտ չ'իրնար գերազանցել ընկերակցաց և միջավայրին մասնորական մակարդակը, և բարոյական կամ կրօնական բնուածքը: Կը բաւ է որ այն անձինք համոզուած ըլլան թէ իրենք միացած են աշխատելու և յոգնելու յոգուն հանրութեան, և այս՝ անկեղծ սիրով և անիշխի համարաշխարհեամբ:

Օգտակար ըլլալ հանրութեան, այս է, կամ աւելի ճիշտն ըսելով այս պիտի ըլլայ իւրաքանչիւր ընկերութեան միակ իղձը, միակ նպատակակէտը:

Արդ կը տեսնէք մի տոյն նշուր այն համարաշխարհի սիրոյ, որ ջանացինք նկարագրել խիստ անկատար կերպով, մեր աղգային այն այլ և այլ ընկերութեանց մէջ, որոնց գոյութիւնը մեզ կը խորտակէ թերեւս օտարներուն առջև:

Ո՞վ է այն գերազանցապէս բարեմիտ և լաւատես անձը, որ պիտի կրնայ հաստատականով պատասխանել մեր հարցումին: Մանաւանդ այն ընկերութեանց ներքին, բայց արտաքին աչքերու համար ոչ այնքան անթափանցելիօրէն ծածուկ խորշերուն և ծալքերուն քիչ շատ հմուտ մը մի անհատ չ'պիտի կարծէ թէ այս զիտի մի հարցում աներկբայապէս հետեւանք է գտնանալով: Ինչ կ'ըսէ, մի որ և է ընկերութեան ընթացքը կ'ի՞նք ու չ'ընք ընտելի, մարդ կամ կ'ընտելու, կամ սաղոյ՛ և կամ քնաթմբեր ըլլալու է տեսնելու համար բուն մը՝ որ գոյութիւն չ'ունի:

Սակայն, բացարձակ յոռետես չ'ըլլալու համար, բա-

ւէին վաճառատանց պահպաններ, մաքսատան ընտանկիրներ և այլն . . .

Ձիս տեսնելով բարեմիտ ժպիտով մը բարեկեց, անունս չէր մոռցած . . .

Այն սենեակը, ուր խոնուած էին գրեթէ երեսունէ աւելի գաւառացիներ, խիստ նեղ էր եկած, շնչառութեան ու քրտնքի հեղձուցիչ հոտ մը ապականած էր անոր օդը, և չ'կարենալով ծածկել գէմքիս պոզանքի ու զրուանքի արտայայտութիւնը, պատուհանին մտակցայ զայն բանալու համար . . .

Բայց գաւառացիներէն մին կոպտօրէն թեւէս բըռնելով մէկիկ քաշեց զիս, ցած ձայնով մը մրմնջելով . . .

— Զմեզ կը լրտեսեն . . .

Նոյն հետաքննող ուղեցի մեկնել այդ զազիր վայրէն, ուր ճակատագիրը կամ իմ հետաքրքրութիւնս առաջնորդած էր իմ անխորձ քայլերը . . . բայց անձանօթ զգացում մը, գուրթի ու խղճի նոտնող բան մը զիս կաշկանդեց . . . և այդ կերպով անարգած պիտի ըլլայ իսկզճ գաւառացիները, նամանաւանդ այն որ թէւեւ չ'ի սիրեր, բայց չ'էի ատեր ալ:

Վերջապէս նախկին քննիչս ստորի կ'ըսէ, որու հետեւեցանք բոլորն ալ:

— Ամենքիդ խորովին գորս մի՛ ելնէք, ինչպէս քանիցս պատկերած եմ, այլ զատ զատ, ու զգուշութեամբ . . .

— Այո՛, այն ներով ընդհատեցին գաւառացիք քննիչիս պատուէրը, ոմանք կը փորձէին ձեռքերն համրու-

ցատութիւն մ'ընենք ի նպատակ գրեթէ աննշանելի փոքրամասնութեան մը:

Իսկ մեծամասնութիւնը . . .

Եւ անշուշտ այն ամեն միամիտները, որոնք՝ ըստ տաճկական առածի՝ արցունք կ'սպասեն մեռելի աչքերէն, հաւատացած են որ այս բոլոր ընկերութեանց առաջին և վերջին նպատակակէտն է ազգայնոց՝ մանաւանդ Հայութեան՝ պատուարեր և անբասիր անդամներ նպատակաւ: Մրազիրները՝ սկիզբէն մրնջեւ վերջը՝ սէր, միութիւն, համարաշխարհեամբ, կարտուկոյ օգնութիւն, գերեզոյ ազատութիւն, անթիւն հաց, մերկին հազուատ, սոցիալներուն զատարարութիւն, և և համանման քաղցրահոտիւն և հեշտապար բառերով խճողուած են: Եւ գործառնութիւնք կ'սկսին գիրար առելով, հայածելով, բամբակելով, բանակելով, կողոպտելով և նոյն իսկ իրենց զաւակներուն զատարարութեան անխոյժ զբաշնուելով:

Ինչո՞ւ այս ներհակութիւնք:

Պատասխանը պարզ է:

Վանդի այն ընկերութեանց մէջ գտնուող ամեն անձինք անկեղծ չ'են: Անոնք, գիտակցաբար կամ ոչ աւելի իրենց անձին կը ծառային քան թէ անդամակցաց հանրութեան օգուտին: Անոնք փառամոլ են կամ շահասէր, և կամ պարզապէս խոտվարար և իրենց կրից գոնացումը կը փնտանն ո՛չ թէ անթերի պարտականութեան արդիւնքին, այլ ընկերակցաց միամտութեան և կոյր վստահութեան մէջ:

Եւ սակայն ընկերութեան մ'ամենաշիտին անգամն իսկ մեծապէս օգտակար կրնայ ըլլալ հանրութեան՝ իր ուղղախոնութեամբ և անկեղծութեամբ:

Եթէ այդ հաստատութեանց անգամները ստուգիւ ընկերութեան ետանդով վատուած ըլլային, ինչ անհուն բարեբաղդութիւն պիտի ըլլար մեզ նման փոքրամի. ազգի մը համար, որ համեմատաբար ստուարաթիւ ընկերութիւններ ունի: Միայն Գահիրէի մէջ՝ ի բաց առեալ զուտ շահագրգիռները՝ կը համրենք եթէ ընկերութիւններ, առաւել կամ նուազ բարեգործական: Եւ Հայոց թիւը հայրի կը համարի երեք հազարի, ինչ է՛նք սխալիւր: Իրականութիւն շարքուցիչ և պանծալի: Բայց ապստ'ս որ . . .

Ըստ մեր կարծեաց, այն անձը որ ժամանակ ունի և ինքզինքը կարող կ'զգայ իր ծայր լսելի ընկու հանրային գործերու մէջ, և որուն յայտնի և թագուն նըատակն է հանրութեան օգուտը — հանրութեամբ կը հանրանք իսկ իր ներկայ և ապագայ սերունդը — պարտաւ՝ այն գործերուն մէջ՝ մտնալ իր անհատական շահը, կիրքը, ատաւելութիւնքը: Անիկա իր շուրջը ուրիշ բան չ'պիտի տեսնէ բայց միայն հաստատակցներ, եղբայրներ և երբեմն զաւակներ, որոնց՝ իր խօսքերովս մը՝ նա անոնց հետ պիտի գործէ, պիտի աշխատի համարաշխարհ, անկեղծաբար, առանց ակնկալելու որ և է շահ մը, վարձատրութիւն մը, նոյն իսկ շնորհապարտութեան արտայայտութիւն մը: Անոր միակ վարձատրութիւնը պիտի ըլլայ՝ ինչպէս վերն բուռեցաւ՝ իր օգտակարութիւնը:

Հակառակ պարագային, մարդաբէ ըլլալու հարկ չ'կայ հաստատակցութեան համար թէ օրերը համրուած են այնպիսի ընկերութեան մը: Եւ այս վաղահաս վախճանն ալ մաղթելի է. վառն զի ինչ որ՝ առանց համա-

րել, տեսայ շատեր որ նորա քղանցքը չ'ընկերներն էին տարած . . .

Վերջապէս խորհրդոր մարդը ձեւքս բռնելով զուրս կ'ըսէ աննկէն. երկրորդ անգամ ըլլալով վերջատին աղատելով զիս ուրիշ անկը գրտութեան մը:

Ոչինչ էի հասկցած ու ըմբռնած իմ տեսածներէս ու լատմներէս:

Շատերուն ձեռքը տեսած էի դատաբար, տեսարակներ և այլն, ուսկից կարող էի հետեւեցնել թէ խորհրդաւոր մարդը կը դատախօսէր . . . այս լաւ՝ բայց ինչ էր ընդ երկար խօսած, մերթ փոփոսացած մերթ խանդով ու եւանգալ և մերթ փոփոս շեշտերով արտասանած բառերուն բուն ու թագուն իմաստը, և որքան որ լարուած ուղղորդութեամբ ունկնդրած էի, նորէն չէի կարողացած բան մը հասկնալ . . .

Իմ վրայ միմիայն մէկ տպաւորութիւն թողած էր այն դէպքը, որուն ներկայ եղած էի, զի ժամ մը հօս կաշկանդուած մնալս ինձ համար մեծ գերախոտութիւն մը կը համարէի . . . անդին զուարճութեան ընկերներս, հաճոյքի ու մեղքի զբօսավայրերը՝ գրկաբաց ինձ կըսպակնին . . .

Ինչպէս ըսի, իմ վրայ միմիայն մէկ տպաւորութիւն էին թողած տեսածներս . . .

(Շարունակելի)

զիւում՝ գայթակղեցնելու հանգամանքն ունի, հետզհետէ աւելի վնասակար կ'ըլլայ, որքան անոր շարարար գոյութիւնն երկարի, նման լնացեալ շրոյ որ հետզհետէ աւելի կը նեխի, եւ հուսկ յետոյ համաճարակ հիւանդութեանց ծնունդ կուտայ :

Ամեն գործի մէջ յաջողութեան միակ պայմաններն են՝ ուղղամտութիւն եւ յարատեւութիւն. ընկերային գործերու մէջ անհրաժեշտ է նաեւ՝ համերաշխութիւն : Սակայն այս բարեմասնութիւնները զարգացնելու եւ անոնցմէ օգտուելու համար մարդ նախ պէտք է ըլլայ՝ ինքն իր անձին բարեկամ, բարոյապես :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ՊԵՆՏԱՆ 4 Օգոստ. — Սեւեռանար թագաւորին ամուսնութիւնը մեծ շքեղութեամբ կատարուեցաւ այսօր :

ՎԱՇԻՆԿՏՈՆ 6 Օգոստ. — Զրոյց կը շրջէ թէ կիրակի օրը Բէյթանի մէջ երկարատեւ ընդհարում մը տեղի ունեցեր է : Զինացիներն եւ քաջուեցան, բայց գահակից զօրաւորները 1200 մարդու կորուստ տուին, մեծ մասը ռոսու ու ճարտարներ :

ՊԵՆՏԱՆ 6 Օգոստ. — Ամերիկեան կառավարութիւնը կը մերժէ արթունել Բէյթանի զեպպաններուն ու օտարականներուն ծովեզերք փոխադրուիլը, զորչափ ինք չպիտի կրնայ ազատօրէն ու ծածկագրութեամբ հաղորդակցիլ իր ներկայացուցիչին հետ :

ԼՈՆԴՈՆ 6 Օգոստ. — Լի-Չունկ-Չանկի ինքնասպանութեան լուրը կը ստանն :

ԲԻՆԹՈՐՈՒՄ 5 Օգոստ. — Զօրավար Իան Համիլթոն բուռն փորձեր կ'ընէ ազատելու Ռեպըլիկը, ուր մեր զօրքերուն կացութիւնը կանխաւ կարծուածէն շատ աւելի դժուար է :

ԼՈՆԴՈՆ 6 Օգոստ. — Բազմաթիւ ապստամբներ կան հաստատող թէ՛ գահակիցները անգին գիւմարութեան մը պիտի հանդիպին :

Ս. Բէթրապորկի մէջ կէս-պաշտօնապէս հրատարակուած Շանկ-Չանկի հետազոտողները կ'ամբաստանեն Անգլիացիներն, որոնք ձեռքի տակէ մասնաւոր բանակցութիւններ կը կատարեն եզեր նանքիսի փոխարքային հետ եւ ընդհանուր միտում մը կը ցուցնեն միւս տէրութեանց հետ անհամաձայն ըլլալու :

Բրիտանական հիւպատոսը կը հեռագրէ Օգոստ. 4ին թէ՛ գահակիցներու խաղաղքը զէպի Բէթին սկսած է այն օրը եւ թէ ճարտական պաշտօնակիցը լուրեր առած է Օգոստ. 1ին իր դեպքանախնէն :

Շանկչանի ճարտանկան հիւպատոսը Բէթինէ պատգամաւոր մ'ընդունած է որով կ'իմացուի թէ՛ Թուէնկ-Յի-Սիանկի դադրեցուցած է զեպպանատանց սահմանուած պաշարները. կ'երեւի թէ՛ յուզումը կ'ածի վերին Եանկ-Չէյի նահանգներուն մէջ :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. ԽՏԻՎԸ, որ Տիվոն կը գտնուէր, Սէն-Մորիս մեկնեցաւ, ուր պիտի անցընէ քանի մ'օր : Յետոյ պիտի երթայ Վիեննա երկու երեք օր հոն անցընելու համար եւ անկից պիտի երթայ 4. Պոլիս :

ՅՐԱՆՍՈՒՍ, ԺՕԶԷՅ. — Նորին վեհափառութեան ծննդեան 70րդ տարեդարձին առթիւ հանդիսաւոր պատարագ մը պիտի մատուցուի «Զքեզ Աստուած գովաբանեմք»ով մը, Ս. Գաթրիին եկեղեցին : Ներկայ պիտի գտնուին Վելիխի նախարարը, հիւպատոսական Տեղապահն ու մարմինը, եւ զաղթականութեան երեւելիները :

ՌՄԲԱԿՈՐՈՒՄ. — Ռուսական Մովակալ Սքրիտուօֆ, Սաղազական Ովկիսովի նաւատորմին հրամանատարը, պաշտօն ստացած է իր կառավարութիւնէն շինական ծովեզերքի բոլոր քաղաքները ուժակոծելու :

Ճերանասական եւ Անգլիական դեսպանները Բ. Գրան տուած էին բողոքագիր մը, էնիս բաշային Հալէպի կուսակալ անուանուելուն դէմ եւ Բ. Գրանը պատասխանած էր արդարացիելով սոյն ընդդրութիւնը յիշեալին վարչական յատուկութիւններով, բայց դեսպաններն այն' աստիճան քիչ գոհ մնացած են այդ պատասխանէն որ Հալէպի իրենց հիւպատոսները ընաւ չէ' ու դացած պաշտօնական այցելութիւնն մը տուաւ. նոր կուսակալին : Այս վերջինը սաստիկ գանդատած է Գրան, անոնց աբարքը որակելով իրբու անարգանք մ'իր ներկայացուցած կառավարութեան : Սակայն ներքին գործերու նախարարը, հասկնալով որ յարմար ատենը չէ՛ վիճարանելու դեսպաններուն հետ, առաջարկեց ետ կանչել էնիս բաշան :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա Յ Է Ն

Սուլթանն եւ իր կառավարութիւնը. դաստիարակութիւն մը. — Հալէպի կառավարութիւնն ու Ֆրանսական դեսպանութիւնը :

4. ՊՈՒՄ 26 Յուլիս

Սուլթանն ու իր կառավարութիւնը ժողովրդականութեանը զրկող պատճառներուն մին կը համարուի զայն շրջապատող դասակարգ : Երբեք պաշտօն մէջ հացկատակներու խումբ մը կայ, որ իր անձնական օգտին համար միայն կը խորհի շահագործել վեհապետին թերեւս վաղանցիկ վստահութիւնը, առանց երբէք հոգն ընելու երկրին շահերը : Դեռ վերջերս, Բարիքի մէջ Պարոն Նիքոլայիտէսի հրատարակած «Լ'Օրիան» (Արեւելք) լրագիրը որ օսմ. կայսրութեան ու անոր պետին բաւական անձուէր մըն է, կը դատաքնէր քաղաքիւսած բառերով, Սուլթանին առաջին քարտուղարը, զոր կը ներկայացնէր իրբու թերացող վեհապետին ու իր հպատակներուն միջեւ իր ունեցած պարտականութեանց մէջ : Այսօր, հանրային կրթութեան բարձրագոյն խորհրդին անդամներէն մէկը չը վախնար ուղղելու օտար լրագրաց բողոքագիր մը, որուն հրատարակութիւնը կը խնդրէ :

—Ո՞վ է այդ առաջին քարտուղարը, պաշտօնապէս, զոր գտնար չէ մէկ տառ միայն փոխելով յորձորէլ պաշտօնապէս (ստախոսներու պէս) :

Ասի ատենք քարտուղարն էր ծովային նախարարին, որ զայն հաւանօրէն լաւ վարժեցուցած պիտի ըլլայ հարստանալու արուեստին, ամեն ազգի խնդրարկուներուն վնասովը : Երբէք յարգ մը չէր վայելեր բայց իր ամուսնութիւնը հոչակաւոր Մահմուտ-Նէտիմի —զոր ժողովուրդը Նէտիմօֆ կ'անուանէր— աղջկանը հետ, իրեն բացաւ Պալատին զոնքը, չնորհու միւսնայն Մահմուտի վաղեմի ծառայի մը պաշտօնանութեան, Լուիֆի Աղային, որ եղած էր յետոյ Սուլթանին վստահելի սենեկապանը, մտերիմն ու խորհրդակալը : Անգամ մը աէր դարձած իր հիմակուան պաշտօնին, Թահսին պէյ (ասոր վրայ է խնդրելը) յաջողեցաւ ոմանց ահ աղբել ու շատերէն ստուիլ :

Թողունք հիմայ որ խօսի Ուալի Էտտին, խնդրոյ առարկայ եղող դատաքնութեան հեղինակը :

«Տեսնելով որ Պալատին մէջ առաջին քարտուղարի կարեւորագոյն պաշտօնն ունեցողին զոնքը հետզհետէ կը բազմապատուէին, որոշեցի, բացարձակապէս պարկեշտ, անկեղծ ու հայրենասիրական նպատակով մը, երկախորութիւն մը յօրինել երեքըկուով, թուրքերէն արարեքէն-Ֆրանսերէն, երեւան հանելու համար իրողութիւններ, որոնք իմ համոզումովս, խստիւ պիտի դատուին անկողմնակալ ու արդարապէս անձերու կողմէն :

«Թուրքիան կը տառապի, եւ օտարները մեր երեւին նետած են «Հիւանդ մարդը» նուաստացուցիչ մակդիրը : Բայց ինչո՞ւ կը տառապինք : Չ'ունի՞րք մեծանձն վեհապետ մը, որուն քաղաքական ու վարչական կարողութիւնները մեծապէս գնահատուած են եւրոպական դիւանագիտութեանը : Չ'ունի՞րք ամեն բան որ պէտք է մեծ ըլլալու համար, ինչպէս որ էինք արդէն երբ որ վեհապետը շրջապատող մարդիկ պարկեշտ էին ու անկեղծ (sic) :

«Մեր անկման ճշմարիտ պատճառներն են Պալատին մէջ ներկայութիւնը շատ մ'անձնաւորութեանց, որոնք կատարեալ պատուար մ'եղած են վեհապետին եւ իր ժողովրդին միջեւ :

«Այս շարագործներու խմբին պետն է, նոյնինքն առաջին քարտուղարը : Ինչքն է որ իր անհատական շահուն համար կանգնեցուցած է այս պատուարը հանրային շահերուն դէմ :

«Բողոքները ընել զաղտնիքները, որ կը պատեն այս ապատուութիւնը (parvenu), յարձակումով առնել այս պատուարը, քանզի զայն, այս է ամեն սրտի ու խղճի տէր մարդերու, կամ աւելի ճիշդը, այս է զո՞հ հայրենիքի մ'ազաղակը :

«Պէտք է որ կործանենք այս պարիսպը, հանելու համար զահին ոտքն ու վեհապետին յայտնելու համար թէ՛ ո՞րչափ տառապեցան հանրային շահերն այս անարժան պաշտօնատարին վարժուեքէն :

«Ահա՛ թէ ինչո՞ւ կը խնդրեմ բոլոր այս մարդուն զոհ եղողներէն, թէ՛ ի թուրքիա եւ թէ՛ Արտասահման, հասցնել անոր հետ իրենց ունեցած պատմութիւնները : Կը խնդրեմ նաեւ ամեն անոնցմէ որոնք այս առապելական դարձած անձին վրայ ունէ տեղեկութիւններ ունին, հաղորդել ինձի զանոնք, որպէսզի կարենամ զիւրութեամբ պլուս հանել գործ մը զոր կը նկատեմ հայրենասիրութեան եւ Օգոստ. վեհապետին ու ամենասիրեցեալ հայրենիքին հանդէպ հաւատարմութեան արբազան պարտականութիւն մը :

Ստորագր. ՌՒԱԼԻ ԷՏՏԻՆ «Անգամ Բարձր. Պորհրդոյ Հանրային Կրթութեան»

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՑԻԱՆ

Վաղը՝ 31 Յուլիսի, առաւօտեան ժամը 10ին, Ֆրանսական Մերակոյտի պալատին մէջ պիտի բացուի Երեսօրհանական միջազգային երկրորդ Համաժողովը, ընդ նախագահութեամբ Պր. Ֆալիէն Մերակոյտի նախագահին : Բազմաթիւ եւ կարեւոր խնդիրներու վրայ պիտի խօսին. մասնաւորապէս պիտի զբաղին Հարաւ-Աֆրիկեան պատուիրակներու ներկայացուցած խնդրագրով :

Պօէր ներկայացուցիչները իրենց խնդրագրոյն մէջ առաջ կը բերեն այն իրաւունքները, որ ունին Թրանսվալի վրայ, որուն գրաւումը իրենք օրինաւոր կերպով ըրած, յետոյ իրենք իրենց խնդրով երկիրը բարեկարգած, արդիւնաբերած եւ հարստացուցած են. ուստի իրաւունք ունին իրենց անկախութեան : Թէ իրենց երկիրը վար չմնար եւրոպական կամ ամերիկեան ձեռքերէ կամ պետութեան, թէ անգլիական գաղութներն իրենց երկիրներէն գերազանց չեն, թէ Թրանսվալի համբաւը այնքան մեծ է որ ամեն երկիրներէ օտարականներ հոն կը թափին եւ կուզեն քաղաքացիութեան իրաւունք ստանալ : Եթէ կուզեն մեր հողին տիրել, կ'ըսեն Պօէրներու ներկայացուցիչները, պատճառը այն է որ մեր երկիրը ոսկիի եւ ազամանդի հանքեր ունի : Մենք ամեն միջոց ի գործ գրինք, պատերազմէն առաջ, խնդրել խաղաղութեամբ վերջացնելու, բայց անկարելի եղաւ, վստահի Անգլիա յենուկ կուզէր մի իրաւունքի վրայ որ չունէր :

Մենք ստիպուեցանք զէնքեր գնել եւ պէտք եղած զգուշութիւնները ձեռք առնել մեր անկախութիւնը պաշտպանելու :

Պատուիրակները կ'աւելցնեն ըսելով թէ իրենք, վստահութեամբ կը դիմեն Համաժողովին, որ կազմուած է ամենաքաղաքակիրթ երկրներու երեսօրհաններէն եւ ներկայացուցիչներէն :

Համաժողովին միջամտութեամբ Հարաւ-Աֆրիկեան պատերազմը կրնայ վերջանալ եւ այս գործը յաւիտեան կ'անմահացնէ Միջազգային երեսօրհանական միութիւնը :

A. Saissy & U. W. ԳԱԼԻԻՍ-ԲԷԼԻ.

Հայոց Բարեգործական ընկերութեան Պատկ. Ընդհ. Ժողովոյ Դիւանը Վարչութեանս զրկած է հետեւեալ երկու պաշտօնական գրութիւններն ի հրատարակութիւն : Այդ գրութիւնները, ինչպէս որ պիտի տեսնեն ընթերցողները, նոյն ընկերութեան Ընդհ. Տնօրէն Տիար Ս. Պիւլպիւլեանի ուղղեալ են, իբրև պատասխանագիր անոր 18 Յուլիս ամսաթիւ դիտողագրին, զոր հրատարակեցինք «Նոր Օրոյի Թիւ 15ի մէջ» :

Թէ՛ այս երկու պաշտօնագիրներուն եւ թէ՛ Ընդհ. Տնօրէնի ծանուցեալ դիտողագրին պարտականութիւնները կը յանձնենք «Նոր Օրոյի Պատ. ընթերցողներուն լուրջ ուշադրութեանը :

Մեծապատիւ Սարգիս էֆ. Պիւլպիւլեան Պատ. Ընդհ. Տնօրէն Բարեգ. ընկ. Հայոց Ի քաղաքիս Տիար.

Պատիւ ունինք յայտնել Ձեր մեծապատուութեան, որ Ձեր Դիւանիս ուղղեալ Յուլիս 18 թուակիր նամակն Վարչական Պորհրդոյ ուշադրութեան յանձնուելով, որոշուեցաւ որ բարեհաճիք ներկայ գտնուի յառաջիկայ Յուլիս 25 չորեքշաբթի երեկոյեան ժամը 7ին, Սրճարանին մէջ գումարուելիք նստին, երկուսեք պէտք եղած բացատրութիւնները արուելու համար, Ձեր դիտողագրի մէջ յայտնուած ինչ ինչ կէտերու մասին, օտակարգ ունենալով նաեւ Սրճարանիս Բ. Կոմսիտայ հարուելիչուն :

Մնամք անկեղծ յարգանքք Վարչական Պորհրդոյ Դիւանի Ատենապետ Ա. Ատենապետ Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ Գ. ՅՈՎԿԻՄԵԱՆ Գահերէ 20 Յուլիս 1900

Մեծագոտի

Սարգիս է. Ք. Պրիպիլեան

Ի թարգմանիս

Տիար,

Պատիւ ունինք յայտնել Ձեզ, որ Ձեր Ընդհ. Տնօրէնի պաշտօնն ստանձնեցիք անոնց սուէ գիտողութեան եւ պայմանի, ինչպէս նախորդ վարչութեան մէջ, սակայն մինչև այսօր Ձեր պարտքը չկատարեցիք եւ Սերժանի գործերը կրեաք վրայ թողուցիք: Ձեր Յունիս 18 զիտողագրի ինչ ինչ կէտերու մասին չը հաճեցաք գալ երես առ երես Դիւանի հետ խորհրդակցել ամսոյս 25ի նստին, հակառակ Ձեզ եղած 20 Յունիս գրաւոր հրաւիրագրին, ինչպէս ասկէ առջի մի քանի նիստերու ալ բացակայ եղաք շարունակաբար. այս ընթացքով պատասխանատուութիւններ կը հրաւիրէք Ձեր վրայ, իբր վարչական խորհրդոյ անդամ եւ իբր Ընդհ. Տնօրէն, Ձեր քանակաւոր խաղաղիկ ընկերութեան շահերն, ուստի վերջին անգամ կը փութանք հրաւիրել Ձեզ ի նիստ, որ պիտի գումարուի յառաջիկայ կրկնաշարի երկնայեան ժամը 7ին ի Սրժարանի ընկերութեանս, որպէս կարգ ունենալով Ձեր զիտողագրի ինչպիսի, Բ. ետեւսեայ հաշուեկ իսն եւ թողգատական հաշիւներ:

Եթէ չբարձրանա՞ք այն նստին եւս ներկայ գրանուելու եւ անգամակցութեան ու Ընդհ. Տնօրէնի պաշտօններն չ'կատարէք, խորհուրդս պիտի պարտաւորի Ձեր անդ ուրիշ Ընդհ. Տնօրէն մ'ընտրել, ընկերութեանս գործերն ասկախ չ'մնալու, եւ Սրժարանի հակողութիւնն կրեաք վրայ չ'թողելու համար:

Մնամք անկեղծ յարգանքով

Վարչական խորհրդոյ Դիւանի

Ա. Աննապետ Բ. Ատնապետ

Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ Ա. ԳԱՐՍԷԱՆԵԱՆ

Գահիրէ, 27 Յունիս 1900

Ա Ձ Դ

Վաստաւորական Որբայինամ եւ Արաբիկ Որբերու Հողատար ընկերութեանց Գործադիր Ժողովներն պատիւ ունին ծանուցանելու Պատ. հասարակութեան թէ ի նպատակ իրենց եւ Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի որբերու անտակին կազմակերպութեամբ վիճակահանութիւնը սեղի ունեցած է նախընթաց կիրակի (5 օգոստ. Ն. Տ.) Ազգային Մանկապարտէզի սրահին մէջ, ընդ հակողութեամբ Առաջնորդական Փոխ-Տեղապահ Հօր եւ ի ներկայութեան Գործ. Ժողովոյ անդամներէ ոմանց եւ հանգիստականաց, եւ շահած են հետեւեալ թիւերը.

Table with 8 columns of numbers: 405 637 2585 1918 160 2728 2662 1280, 585 585 850 669 2231 2303 299 2044, 2606 386 1183 2032 1594 394 2892 2771, 2029 222 828 105 738 1237 732

Առարկաները կը գտնուին Տիար Գարեգին Իսազուլեանի խանութը, ի Շարա Ալայ-է-Աղիզ. շահողները կրնան ամսները յանձնելով ստանալ իրենց վիճակած պարգևներն յիշեալէն, ներկայ ամսոյս 5էն սկսելով մինչև 91 օր. այնուհետեւ չպահանջուած պարգևներն ընկերութեանս սեփականութիւնը կ'ըլլան:

Գահիրէ 7 օգոստ. 1900 Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմալէզ» բացարկի պրակ մը կը հրատարակէ: Թերթին կրկնաթիւնն է 42 հարկը բարձրացնելով, լայնք 30 հրգմ. Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, եւ ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է: Թողթը հասա, ողորկ, փայլուն ու շատ ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ: «Բազմալէզ»ի այս բացարկի լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի ի իրիւս անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման Եւրոպական մեծ ազգայնաբանական պատկերազարդ թերթերուն:

Կը սպուրի մի քանի հազար եւ ստակը պիտի յառկացուի հայ որբանոցներու:

Գինն է ԿԱՆՆԻՆԻ 2.50 Ֆր. կամ 1 ռբ. 50 սէնթ:

Այս ծանուցադրով կը հրաւիրենք մերազնեայ այն ամէն ազնիւ ու զթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացարկի պրակին, համառ լուծայ մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր

որբանոցներու, պիտի սպուրի «Բազմալէզ»ի պրակին ընդ մէջ:

Այս բացարկի թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 ամսով, փոփոխողք փութան յղել իրենց ծանուցումները:

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue «PAZMAVEB» (St. Lazar) VENISE (ITALIE)

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՑ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՍԱՆ

Ընկերութեան Ա. տարիքը լրանալու մօտ է, եւ միտմանայ հաշուեկիսն ու տեղեկագիրը պիտի պատրաստուի, ներկայուելու համար յառաջիկայ Ընդհ. Ժողովոյ տարեկան գումարման, որ տեղի պիտի ունենայ Ազգ. Մանկապարտէզի Սրահը, Օգոստոս 28 ին կիրակի օրը: Եւ որովհետեւ միտմանայ հաշուեկիսն մը պէտք է պարտաւորեալ ամբողջ մէկ տարուան գործառնութիւնները, հարկ անհրաժեշտ է որ հաշիւները փակուին մինչև Օգոստոս 1. թուական հիմնարկութեան Հարան. Ընթերցատուն ընկերութեան:

Հետևաբար Գործ. Ժողովոյ պարտք կ'զգայ պաշտօնագրէս հրատարակութեան տալ ընկերութեանս հիմնական կանոնագրին 7րդ եւ ներքին կանոնագրին 14րդ յօդուածները:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ. Յօդ. 7. — Այն անգամն որ երեք ամիս շարունակ անվճար կը թողու իր բաժանորդութեան պատեր, Գործ. Ժողովոյ կողմէն կ'ներարկուի ներքին կանոնագրի 14րդ յօդուածին քանակութեամբ:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆ. Յօդ. 14. — Գործ. Ժողովոյ վերջին պատշտական ազգաբարձրութեան յետոյ զարեւել իր պատեր չ'վճարող անգամն կը գեղափ Բնդհ. Ժողովոյ անգամակցութեան:

Հիմնուելով Ընկերութեան Ընդհ. Ժողովոյ թաղարձակ հաւանութեամբ վաւերացեալ հիմնական եւ ներքին կանոնագրիներուն վերաբերեալ 2 յօդուածներուն ոգոյն վրայ, սոյն վերջին պաշտօնական ազգաբարձրութեամբ կը հրաւիրենք ուշադրութիւնը բարձր այն Պատ. ընկերներուն սրահ իրենց պարտքը քարոզ թերթով թողած են կամ քնա չ'են վճարած: Առ այս Գործադիր Ժողովը պայմանաժամ որոշած է մինչև յառաջիկայ Օգոստոս 12: Մինչև այդ օրոշեալ թուականը կը խնդրուի Պատ. անգամներէն որ հաճին ամբողջացնել իրենց վճարումները, գիմելով ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը որ է Ընկերութեան կեդրոնատեղին, Պազար Մուրտի մէջ, թիւ 38 գրասենեակը. հակառակ պարտադրան, Գործ. Ժողովոյ կողմանէ անգամակցութեան զրկուած կը յայտարարուի անո ք. ըլլան նոյն իսկ Մայր Դիւանի կամ Գործ. Ժողովոյ անգամներ:

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ ՏԻԳՐԱՆ Ն. Թ. ՍԱԻԱԼԱՆ

ԿԵՆՍԱԳՐ ԿԱՆ. ՅՈՒՇԵՐ

Ս. Գարբինեան տպարանէն մարտի տպագրութեամբ եւ հիդրոպիկին վիճակը պատկերով զարգարուած ի լոյս ելնելու մօտ է հարիւր տակի էջերէ բազկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան օտարաշուկութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման: Ինքնակենսագիրն, Զմիւռնիոյ հին ծանօթ գրական գէմբերէն մին, իւր Ծրուածագէմ, Ազգաբանագրիւ, Իզմիր եւ Էտեմիշ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու բերմամբ՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւ որ անձնաւորութեանց հետ ունեցած է գրաւոր եւ մտերմական յարաբերութիւններ, զորս զիտցած է ճարտար եղանակաւ իր խառնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարդալ անձանքը իւր եւ լարուած հետաքրքրութեամբ:

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փոփոխողք կրնան այլմէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ գիմելով

Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ Ի Պազար Մուրտի Թիւ 27 Գին 5 ԳԱՂ. ՈՂՁ

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒՉԷՔ ՈՒՆԵՆԱԿ ՈՍԿԻ ԿՈՒՅԷՆ ԼՍՐԻՈՂ. ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ ԺՍԱՍՑՈՅՑ ՍԸ ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐՆԵԼՈՎ ԴԻՄԵՏԷՔ

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ ԳՈՂԻՐԷ ՄՈՒՍԻՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազիւրաւանակի գնեքէն սկսելով մինչև ազաման-գաղարջ: Արժաթ ժամացոյցներ 50 զրուչէն սկսեալ: Նիքէլ սրմանթուառ ժամացոյցներ 22 զրուչէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շքեթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քօնաօլի բազմազան բանտիւլներ: Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Դրուչի աննաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն:

Ուրեմն գիմելէ՛ք ուղղակի: ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԿԵՐՈՆԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԷԻ Հաստատու 1 յունվար 1897 Հիմնադիր-Յօրհե Ա. ԲԻՒՐՆԻՍ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ՝ Ալպահին, և Յունիս 1է սկսեալ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած: Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաեւ, առեւտրական աշխարհագրութիւն ու ստամբակալութիւն, գործնական մէթոտով: Ընդունելութեան պայմաններն և ուրիշ մանրամասնութեանց անընդհատ համար գիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պազար Մուրտի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայ ի կիրակիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6:

ԱՏԱՍՏԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ տը լա Պուրտի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնուողը: Կը բժշկէ բերնի և ակուպիւր ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազգայնները ձրի կը գարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ԶՈՒԻԻՉ - ՄԵՔԵՆԱԳՈՐԾ ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՄԱՐԱՆԸ Շարա Մաւանիքիս Ալի, Հապոյտնիկ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրը արհեստներու վերաբերեալ, ծորակ, ելն: Բաճախորդները գոհացունող պայմաններով:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 3 ՕԳՈՍՏՈՍ 1900

Table with 6 columns of numbers: 8834 9138 5808 6077 9192 546, 544 656 949 4474 2799 3054, 5349 6815 6653 6419 6303 7858, 7417 7654 7057 8438 8675 8303, 9528 9519 9725

Տպագրութիւն Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրտի